

000

1920 թ. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՆՐԱ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Ա. 2. ՍԻՄՈՆՅԱՆ

1920 թ. ապրիլի վերջերին տեղի ունեցած Ադրբեջանի խորհրդայնացումը և կարմիր բանակի մոտենալը Ղարաբաղի և Զանգեզուրի սահմաններին լուրջ սպառնալիք էին ստեղծել Հայաստանի անվտանգության համար նրա արևելյան, հարավային և հյուսիսային սահմանների կողմից: Հանրապետության վիճակը տագնապալի էր դարձել նաև այն պատճառով, որ Անկարայի քեմալական կառավարությունը, ստանալով խորհրդային Ռուսաստանի ռազմական, դիվանագիտական և բարոյա-քաղաքական աջակցությունը, Հայաստանին սպառնում էր նրա արևմտյան կողմից: Հանրապետության վրա կախվել էր իր անկախությունը կորցնելու, իսկ ժողովրդի գլխին՝ նոր կոտորածների ենթարկվելու վտանգը:

Հայրենիքի համար այդ օրհասական պահին, երբ հանրապետությանը վիճակված էր դիմագրավել ահաբեկի վտանգը, ծագեց մի ուրիշ վտանգ ևս, այս անգամ՝ երկրի ներսում:

Դեռևս ապրիլի կեսերին Զ. Յ. Դաշնակցության Բյուրոն կառավարությանն առաջարկ էր ներկայացրել աշխատավորների միջազգային համերաշխության օրը՝ մայիսի 1-ը, առաջին անգամ անկախ Հայաստանում լայնորեն նշելու մասին:

Ապրիլի 30-ի առավոտյան Զ. Յ. Դաշնակցության պաշտոնական ներկայացուցիչը վարչապետ Ալ. Խատիսյանին հայտնում է, որ աչքի առաջ ունենալով բունվորական տոնի բնույթը՝ կուսակցության բյուրոն որոշել է իր վրա վերցնել փողոցներում կարգապահության պահպանությունը և ժողովրդական ցույցերի ղեկավարությունը: Վարչապետն այդ հայտարարությունը ընդունում է ի գիտություն, բայց այնուամենայնիվ հրավիրում է իր մոտ քաղաքապետ Ա. Շահխաթունուն և նրան հայտնում, որ թեև կուսակցությունն իր վրա է վերցնելու տոնակատարության վերահսկողությունը, բայց դա իշխանություններին չի ազատելու կարգապահության համար պատասխանատվությունից, ուստի քաղաքի իշխանությունները պարտավոր են աշալուրջ հետևել փողոցներում տեղի ունենալիք բոլոր անցուղարձերին<sup>1</sup>:

Նույն օրը վարչապետին է ներկայանում նաև տոնակատարության կարգադրիչ հանձնախմբի նախագահ, Հայաստանի արհեստակցական կուզմակերպությունների միության նախագահ Ավալյանը և նրան հավաստիացնում, որ մայիսի 1-ին ամեն բան կընթանա կանոնավոր կարգապահությամբ:

Մայիսի 1-ի առավոտյան Երևանի կենտրոնական մասում երկու տեղ կախված էին պլակատներ ու կարգախոսներ հետևյալ կոչերով ու բովանդա-

<sup>1</sup> Տե՛ս Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումը ու զարգացումը, Բ. տրպագրություն, Գեյրուք, 1968, էջ 210:

կուձյամբ. «Կեցցե՛ ազգերի համերաշխությունը», «Անկախ և Միացյալ Հաստատանի աշխատավորությունը ողջունում է մայիսի 1-ի մեծ տոնը», «Ամբողջ իշխանությունը աշխատավորությանը», «Կեցցե՛ Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատը և գյուղացիությունը»:

Շքերթը շուտով պիտի սկսվեր, և շարքերի առջևից պիտի գնար բեռնակիր մի մեծ ավտոմոբիլ, որը զարդարված էր պլակատներով, դրոշակներով, ծաղիկներով, Կարլ Մարքսի, Քրիստափոր Միքայելյանի, Ստեփան Շահումյանի, Սիմոն Զավարյանի, Լևոն Աթաբեկյանի և Ռոստոմի նկարներով: Քիչ հետո եղած լողունգներին ավելացան նորերը, որոնց թվում էին նաև «Կեցցե՛ Ծրրորդ Ինտերնացիոնալը», «Կեցցե՛ սոցիալիզմը»<sup>2</sup>:

Դեռ նոր էր սկսվել մայիսմեկյան հանդիսությունը, երբ այն աստիճանաբար վերածվեց ցույցի, ապա փոխվեց գրոհի հանրապետության կառավարության և դաշնակցության դեմ: Նույնը կատարվեց նաև Ալեքսանդրապոլում, Սարիղամիշում, Ղարսում, Դիլիջան—Իջևանում, Նոր-Բայազետում:

Յուլյեբրը, միտինգները, բողոքները ամբողջ մայիս ամսվա ընթացքում հանրապետության տարբեր քաղաքներում և շրջաններում փոխարկվեցին ապստամբական ելույթների, որոնք գլխավորում էին բուլժեիկները: Ապստամբությունը նպատակ ուներ հեշտացնելու կարմիր բանակի և խորհրդային Ազգրբեջանի գործը: Մայիսյան ապստամբությունը Հայաստանում դեկավարվում էր Բաքվից և հարված էր հայկական պետականության թիկունքից:

Առաջին պահին շփոթի մատնված կառավարությունը կարողացավ ուշքի գալ և վճռական միջոցների դիմել երկրում կարգն ու հանգստությունը վերականգնելու համար: Սիմոն Վրացյանի վկայությամբ կառավարական մեքենան այլևս ի վիճակի չէր բռնկված հրդեհը մարելու: Ծիշտ է, մայիսի 3-ին կատարվել էր նախարարների խորհրդի մասնակի լրացում. կառավարության մեջ մտցվել էին Ա. Զամալյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ս. Վրացյանը, որով Հ. Յ. Գ. Բյուրոյի անդամների մեծ մասը դարձել էին նախարար, բայց կառավարելու եղանակը՝ խորհրդարանական դանդաղաշարժ մեքենայով՝ չէր համապատասխանում պահի պահանջին: Անհրաժեշտ էր արագաշարժ ու վճռական իշխանություն: Հարկավոր էին կտրուկ միջոցներ<sup>3</sup>:

Մայիսի 4-ի լույս 5-ի գիշերը տեղի է ունենում Հ. Յ. Դաշնակցության խորհրդարանական ֆրակցիայի և կուսակցության գլխավոր վարիչ մարմնի՝ Բյուրոյի համատեղ նիստ, որը սկսված ապստամբությունը ճնշելու համար որոշում է ընդունում դիմել արտակարգ միջոցների և, որպես հիմնական միջոց, առաջարկում է կազմել նոր կառավարություն, որը բաղկացած լինի միայն Հ. Յ. Գ. Բյուրոյի անդամներից և օժտված լինի դիկտատորական լիազորություններով: Կառավարության նախագահի պաշտոնի համար խորհրդակցությունն առաջադրում է Բյուրոյի անդամ Համո Օհանջանյանին<sup>4</sup>:

Մայիսի 5-ին գումարվեց խորհրդարանի արտակարգ նիստը, որն ընդունեց Ալ. Խատիսյանի և նրա դահլիճի հրաժարականը: Նույն նիստում խորհրդարանը նշանակեց նոր կառավարություն հետևյալ կազմով. վարչապետ և արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյան, ներքին և զինվորական՝ Ռուբեն Տեր-Մինասյան, ելևմտական՝ Աբրահամ Գյուլխանդանյան, հաղորդակցության՝ Արշակ Զամալյան, գյուղատնտեսության, պետական գույքերի

<sup>2</sup> Տե՛ս Առաջին մասնայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը). Նյութեր և փաստաթղթեր, Երևան, 1932, էջ 40—41:

<sup>3</sup> Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, երրորդ տպագրություն, Քհնհրան, 1982, էջ 390:

<sup>4</sup> Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումը ու զարգացումը, էջ 214—215:

և աշխատանքի՝ Սիմոն Վրացյան, խնամատարության՝ Սարգիս Արարատյան, հանրային կրթության և արվեստի՝ Գ. Ղաղարյան:

Այսպիսով, Հ. Յ. Դաշնակցության Բյուրոն իր ամբողջ կազմով անցավ իշխանության գլուխ: Խորհրդարանը որոշեց մեկ ամսով դադարեցնել իր գործունեությունը և, ելնելով երկրում ստեղծված արտակարգ ծանր վիճակից, օրենսդիր և գործադիր ողջ իշխանությունը հանձնել Բյուրո-կառավարության ձեռքը: Պառլամենտի կամքով երկրում փաստորեն հաստատվեց Դաշնակցության կուսակցության դիկտատուրա:

Նոր կառավարությունն անմիջապես հայրենիքը հայտարարեց վտանգի մեջ և կոչով դիմեց ժողովրդին, որտեղ նաև ասված էր.

«Քաղաքացիներ, Հայաստանը կարիք ունի հանգստի և համերաշխութեան, ո՛չ մի հուզում, ո՛չ մի խլրտում — ամեն ոք պետք է գտնվի իր գործի և պաշտոնի գլխին: Զինված պառլամենտից ստացած արտակարգ լիազորություններով՝ կառավարությունը դիմում է ձեր քաղաքացիական գիտակցութեան և հրավիրում ամենքիդ. հայ ժողովրդի գոյութեան այս ճգնաժամային վայրկեանին, համախմբվել կառավարութեան շուրջը, որի նշանաբանն է՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՎ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՈՒՆՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԴԵՄՈՒՐԱՏԻԿ ԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ: Այս նպատակներն իրագործելու համար կառավարութիւնը շի խնայի և ո՛չ մի ճիգ, և նա կհաղթի ձեզ հետ և ձեզ համար»<sup>5</sup>:

Բյուրո-կառավարությունը հայտարարեց բոլոր դաշնակցականների ընդհանուր զորաշարժ: Դաշնակցական բոլոր հայտնի գործիչները լայն լիազորություններով մեկնեցին գավառները: Ամեն տեղ կազմվում էին կամավորական զինված խմբեր և դրվում կառավարության տրամադրության տակ, իրմբապետ Սեպուհի գլխավորությամբ կազմվեց մի առանձին զորամաս՝ Ալեքսանդրապոլը վերագրավելու համար: Հիմնվեց արտակարգ դատարան: Երկրում հայտարարվեց արտակարգ վիճակ:

Կառավարության այս քայլերը պաշտպանություն գտան հասարակական լայն շերտերում: Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության Երևանի կոմիտեն կոչով դիմեց հանրապետության բանվորներին, գյուղացիներին, բոլոր քաղաքացիներին՝ դատապարտելով ապստամբության կազմակերպիչներին: «Ամեն մեկիդ սրբազան պարտականությունն է, — ասված էր կոչի մեջ, — այս ծանր օրերին ձեր ուժի ու եռանդի, շնորհքի և ընդունակության մաքսիմումը նվիրաբերել վտանգված հայրենիքի պաշտպանության գործին»<sup>6</sup>:

Նույնքան վճռական էին Հայ ժողովրդական կուսակցության<sup>8</sup>, Ռամկավար կուսակցության<sup>9</sup>, Անկուսակցականների միության, Հայաստանի արհմիությունների խորհրդի կոչերը<sup>10</sup>, որոնցում անվերապահորեն դատապարտվում էր ապստամբությունը և ժողովրդին հրավեր էր ուղղվում՝ ամեն ինչով աջակցել կառավարությանը՝ երկրում կարգն արագորեն վերականգնելու համար:

Քաղաքացիական կովից ու արյունահեղությունից խուսափելու նպատակով կառավարությունը փորձեց խաղաղ միջոցներով կարգավորել խնդիրը, բայց այդ բանը նրան չհաջողվեց: Երբ այդ ուղղությամբ թափած ճիգերն ան-

<sup>5</sup> Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 390:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 391—392:

<sup>7</sup> «Յառաջ», № 101, 16 մայիսի 1920 թ.:

<sup>8</sup> Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 395:

<sup>9</sup> «Յառաջ», № 108, 19 մայիսի 1920 թ.:

<sup>10</sup> Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 394:

ցան ապարդյուն, կառավարութիւնն ապստամբների դեմ շարժեց զինված ուժեր: Ապստամբութեան կենտրոն Ալեքսանդրապոլը գրավելուց հետո զինված ելույթները մեկը մյուսի ետևից ճնշվեցին Ղարսում, Սարիղամիշում, Նոր-Բայազետում, Դիլիջանում: Երկու շաբաթվա ընթացքում կառավարութիւնն ամբողջ երկրում վերականգնեց կարգը:

Երբ ապստամբութիւնն արդեն ճնշված էր, և երկրում վերականգնված էր կարգը, ուշացումով մի նոր բռնկում տեղի ունեցավ Զանգեզուրում: Դա ապստամբութեան վերջին առկայծումն էր:

1920 թ. մայիսի 23-ին 11-րդ կարմիր բանակի զորամասերը մտան Շուշի և Ղարաբաղը հայտարարվեց Խորհրդային: Այնտեղ գտնվող հայկական էքսպեդիցիոն ջոկատը՝ Դրաստամատ Կանայանի (Դրո) հրամանատարութեամբ, Հայաստանի կառավարութեան ցուցումով, թողեց Ղարաբաղը և շարժվեց դեպի Հայաստանի Հանրապետութեան տարածք՝ Զանգեզուր:

Խորհրդային զորքերի կողմից Ղարաբաղի գրավումը և կարմիր զորամասերի մոտենալը Զանգեզուրի սահմաններին թևավորեցին տեղի բոլշևիկներին, որոնք պահել հարմար գտնելով զենքի դիմեցին: Նրանք համոզված էին, որ ապստամբութիւն բարձրացնելու դեպքում իրենց անմիջապես օգնութեան կգան կարմիր բանակի զորամասերը և միասնական ուժերով գաւառում կհաստատեն Խորհրդային կարգեր: Զանգեզուրի բոլշևիկները սպրտամբութեան համար պահել հարմար էին համարում նաև այն պատճառով, որ Հայաստանի տարբեր վայրերում մայիսին տեղի ունեցած բոլշևիկյան զինված ելույթները, իրենց կարծիքով, արդեն լիովին շփոթի էին մատնել հանրապետութեան իշխանութիւններին, որոնք, իբր, այլևս անուժ էին զինված միջամտութեամբ ճնշելու զանգվածային որևէ ընդվզում Զանգեզուրում:

Ապստամբութեան նախապատրաստութեան գործը ղեկավարում էր 1920 թ. մայիսի 5-ին Գորիսում կազմակերպված ՌԿ(Բ)Կ Զանգեզուրի ժամանակավոր կենտրոնական Կոմիտեն: Այդ ղեկավար մարմնի մեջ էին մտնում Հակոբ Կամարին (նախագահ), Գորիս քաղաքում 1919 թ. ստեղծված բոլշևիկյան առաջին ընդհատակյա բջջի ղեկավար Երեմիա Բակունցը, Քրիստափոր Մկրտչյանը, Մակիշ Մաշուրյանը, Հայկ Սիլանյանը, Նիկոլայ Արզումանյանը և Բագրատ Հարութիւնյանը:

Քոլոր գյուղերը միաժամանակ ոտքի հանելու համար գավառային կոմիտեն անհրաժեշտ գրութիւններ էր ուղարկել տեղերը: Խնդիր էր դրված՝ Զանգեզուրի սահմաններին կարմիր բանակի զորամասերի մոտենալուն պես պատրաստ լինել ապստամբութեան:

Ապստամբութեան նախապատրաստութիւնը դեռ չէր ավարտվել, երբ գաւառի իշխանութիւնները ձեռքակալեցին Հակոբ Կամարուն և զինվորների ուղեկցութեամբ Գորիսից ուղարկեցին Ղարաբաղ՝ հանձնելու Դրոյին: Բայց նախօրյակին Քրիստափոր Մկրտչյանին հաջողվում է կազմակերպել նրա ազատումը: Մկրտչյանը գալիս է Խնձորեսկ գյուղ և տեղի բոլշևիկյան կազմակերպութեանը հանձնարարում է ձախողել Զանգեզուրի կոմունիստների ղեկավարին Ղարաբաղ տանելու: Գյուղի կոմունիստներից ստեղծվում է զինված խումբ, որը Աբել Ղավալյանի գլխավորութեամբ կտրում է Տեղ գյուղից Կոնիձոր տանող ճանապարհը, որտեղով պետք է զինվորների հսկողութեամբ անցնէր Կամարին: Խումբը զենքի սպառնալիքով ազատում է նրան և բերում Խնձորեսկ: Այստեղ մի քանի օր մնալուց հետո, հետքերը կորցնելու նպատակով, Կամարին գաղտնի տեղափոխվում է Ալղուլիշեն գյուղը, իսկ այնտեղից՝ Քարահունջ, ապահով թաքստոց<sup>11</sup>:

<sup>11</sup> 22 ՀԳԿԿՊԱ, ֆ. 4033, ց. 4, գ. 256, թ. 3-6:

Ապստամբութեան նախօրեին Ռկ(բ)Կ Զանգեզուրի Կենտրոնական Կոմիտեի անդամների հետ միասին ակտիվ աշխատանք էին տանում Յաշա Մարտիրոսյանը, Գաբրիել Սեւանը, Բագրատ Ղարազյուզյանը, Գարեգին Մալիսյանը, Սողոմոն Կարապետյանը, Գառնիկ Ղազարյանը և ուրիշ կոմունիստներ: Այդ աշխատանքի հետևաբար խմորումներ տեղի ունեցան Գորիսի շրջանի Խնձորեսկ, Տեղ, Ալուզիչեն, Քարահունջ, Շինուհայր, Սիսիանի շրջանի Բոնակոթ, Ղափանի շրջանի Մավ, Շիկահող գյուղերում, Գորիսի կազմային գումարտակի զինվորների մեջ, ուր ակտիվ պրոպագանդա էին տանում կոմունիստներ Արսեն Մայսուրյանը, Տիգրան Սարգսյանը, Արսեն Խոյունցը:

Խմորումներն աստիճանաբար փոխվեցին հուզումների, և կոմունիստները բացահայտ ձեռնոց նետեցին գավառի իշխանություններին: Մայիսի 18-ին զինված ելույթներ եղան Սիսիանի շրջանի Բոնակոթ, Բունիս, Ղարաքիլիսա, Ախլաթյան գյուղերում: Ապստամբները ձերբակալեցին տեղի պաշտոնյաներին և բռնագրավեցին Բոնակոթ գյուղում գտնվող ռազմական պահեստը:

Սակայն ապստամբությունը հատկապես համառ բնույթ ընդունեց բուն Զանգեզուրի (Գորիսի շրջան) Խնձորեսկ գյուղում:

Զինված ելույթի նախօրյակին Խնձորեսկի բուլճերիկյան կազմակերպության անդամների թիվը հասնում էր 75 հոգու: Դա պատկառելի ուժ էր, որին հաջողվել էր իր հետևից տանել գյուղացիների մեծ մասին:

Ապստամբության հետ կապված կոնկրետ հարցերը քննարկելու համար մայիսի 26-ին Ղուկաս Յուզբաշյանի տանը տեղի ունեցավ Խնձորեսկի կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովը: Ժողովի աշխատանքները ղեկավարում էր Հայկ Սիլանյանը: Ժողովին մասնակցելու համար գավառային կոմիտեն Խնձորեսկ էր գործուղել իր ներկայացուցչին՝ Մուշեղ Մկրտչյանին: Հակոբ Կամարին վատառողջ էր և գտնվում էր Քարահունջ գյուղի ընդհատակում:

Բացելով ժողովը՝ Հայկ Սիլանյանը հանգամանորեն խոսեց հատկապես ապստամբության քաղաքական նշանակության և հաղթանակի հետ կապված բարդությունների մասին: «Դժվարությունները մեզ չպետք է վախեցնեն,— ասաց նա:— Ապստամբությունը սկսում ենք վաղը լուսաբացին: Առաջին հերթին պետք է գրավենք գյուղում գտնվող զորամասի շտաբը, ապա՝ զինանոցը»: Նա համոզված ասում էր. «Մեզ օգնության կգան հարևան գյուղերից: Միասնական ուժերով պետք է զինաթափենք Ղարաբաղից նահանջող Դրոյի զորամասը: Մենք մենակ չենք. մեզ օգնության կհասնի նաև կարմիր բանակը: Սակայն մեր գործի հաջողությունը կախված է առաջին հերթին մեր համարձակությունից և կամքից»<sup>12</sup>:

Ժողովի նախագահի ելույթից անմիջապես հետո հանդես եկած Իսկանդար էքսիբարյանը չերմորեն պաշտպանեց ապստամբության գաղափարը:

Ապստամբություն բարձրացնելու առաջարկը, սակայն, լուրջ դիմադրության հանդիպեց: Եվ առաջինը դեմ արտահայտվեց գավառային կոմիտեի ներկայացուցիչ Մ. Մկրտչյանը, այն համարելով վաղաժամ: Նա ասաց, որ մյուս գյուղերը պատրաստ չեն, հույս չկա նաև, որ ժամանակին օգնության կգան կարմիր զորամասերը:

Զինված ելույթն անհապաղ սկսելուն դեմ էր նաև բուլճերիկների գավառային կենտրոնական կոմիտեի նախագահ Հակոբ Կամարին: Զվարողանալով մասնակցել ժողովին, բայց իմանալով դրա հրավիրման մասին, նա ընդհատակից նամակ էր ուղարկել Հ. Սիլանյանին, ուր կտրականապես մերժել էր տվյալ պահին ապստամբություն բարձրացնելու ծրագիրը:

2. Կամարու նամակը կարդացին ժողովում: Մավալվեց բուն ու երկարատև վիճաբանություն. ամեն մեկն իր կարծիքն էր հայտնում և բերում իր տեսակետը հիմնավորող փաստարկներ: Կեսգիշերին գավառային կոմիտեի հանձնարարությունը ժողովատեղի եկավ Ալեքսանդր Գաղաթյանը, որը նույնպես պարզաբանեց կոմիտեի տեսակետը՝ շեշտելով, որ ոչ միայն Գորիսի, այլև Միսիսի, առավել ևս՝ Ղափանի բուլղերիցները պատրաստ չեն ապստամբության: Բայց դա էլ չօգնեց: Միլանյանը շարունակում է պնդել ապստամբությունը սկսելու առաջարկի վրա և նույնիսկ հենց այդտեղ պատռում է Կամարու նամակը:

Մի քանի ժամ տևած մտքերի փոխանակումից հետո քվեարկության է դրվում ապստամբությունը սկսելու հարցը: Ջայների մեծամասնությամբ որոշվում է մայիսի 27-ի առավոտյան ապստամբել: Այդ որոշումն ընդունելուց հետո ժողովն ընտրում է Խնձորեսկի հեղափոխական կոմիտե հետևյալ կազմով. Հայկ Միլանյան (նախագահ), Աբել Ղավալյան (տեղակալ), Արսեն Մայսուրյան, Հարություն Քաթարյան, Գարեգին Մայիլյան, Բագրատ Ղարազյոզյան, Իսկանդար էքտիբարյան:

Հեղկոմը, զինելով գյուղի կոմունիստներին, մայիսի 27-ի առավոտյան ապստամբություն է բարձրացնում: Հեղկոմի կոչերի հետևից գնում էին հարյուրավոր գյուղացիներ: Ապստամբները առաջին հերթին կտրեցին հեռախոսալարը, ապա գրավեցին զինվորական շտաբը և ձերբակալեցին շտաբի պետ կապիտան Գարեգին Ամիրխանյանին, կոմիսար Հայրապետ Առուշանյանին և ուրիշ զինվորականներին: Այնուհետև գրավվեց ռազմամթերքի պահեստը, ապստամբների ձեռքն անցան մեծ թվով հրացաններ, զգալի քանակությամբ փամփուշտ, հանդերձանք:

Գյուղի հեղկոմն անմիջապես ձեռնարկեց խմբերի ստեղծմանը, որի անդամներին բաժանվեցին հենց նոր գրաված հրացանները և փամփուշտները: Խմբերից ամեն մեկը ստացավ կոնկրետ առաջադրանք ու գրավեց իրեն հատկացված դիրքը: Կազմվեց նաև գնդացրային դասակ՝ Մաթևոս Ասատրյանի ղեկավարությամբ, որին հանձնարարվեց դիրք մտնել Կուրաթ գետի մոտերքում, որտեղ սպասվում էր Դրոյի զորամասի անցումը<sup>13</sup>:

Ապստամբության լուրն անմիջապես հասավ Դրոյին, որն այդ ժամանակ իր զորամասով գտնվում էր սահմանային Կոռնիձոր գյուղում, որտեղից Խընձորեսկ գյուղի տարածքներով անցնող խճուղով պետք է մեկներ Գորիս քաղաքը:

Դրոն անմիջապես Խնձորեսկի վրա շարժեց իր զորամասը: Նույն ժամանակ գյուղի հեղկոմը կազմում է մի հանդուգն վերջնագիր՝ նրան ներկայացնելու համար: Վերջնագիրը տանելու պարտականությունը ստանձնում է Բախչի Առուշանյանը, որը Կուրաթ գետի այգիների մոտ այն հանձնում է Դրոյին:

Հեղկոմը Դրոյին առաջարկել էր սահմանային Տեղ գյուղում հանձնել ամբողջ զենքը, հենց այդտեղ էլ արձակել հեծելազոր զորակոչված բնիկ զանգեղուրցիներին և զինաթափված զորամասով հեռանալ Սյունիքի տարածքից:

Ի պատասխան այդ անհեթեթ վերջնագրի, Դրոն անմիջապես հեծելազորը շարժեց Խնձորեսկի վրա: Զորամասը առանց դժվարության գրավում է գյուղը, իսկ ապստամբները հեռանում են ձորերը՝ համարյա կորուստներ չտալով: Նրանց օգնության չեկան հարևան գյուղերից, չեկան նաև կարմիր բանակի զորամասերը: Սկսեցին հարցաքննությունները և ծեծը, գնդակահարվեցին հեղկոմի անդամ Իսկանդար էքտիբարյանը և անվանի բուլղերի, Ղարաբաղը և Զանգեզուրը Աղբբեջանին հանձնելու ջերմ կողմնակից, Բաբվում Ղարա-

բաղ—Զանգեզուրի արտակարգ կոմիսար նշանակված և կարմիր բանակի հետ Զանգեզուր եկող Արմենակ Ղարազյոզյանի հայրը՝ Մկրտիչ Ղարազյոզյանը, Բախշի Առուշանյանը և Արսեն Խոյունցը ուղարկվեցին Գորիսի բանտ:

Ապստամբությունը Խնձորեսկում ճնշելուց հետո Զանգեզուրում ծայր առան հուզումների աչքի ընկնող ղեկավարների և առավել ակտիվ մասնակիցների հետապնդումները: Կոմունիստների տները խուզարկելիս գավառի իշխանությունների ձեռքն էին անցել ռազմական գաղտնիքներ պարունակող նամակներ՝ հասցեագրված Աղբբեջանի Ռազմհեղկոմին և կարմիր բանակի հրամանատարությանը: Խուզարկումների արդյունքում սկսվեցին ձերբակալություններ: Եթե Գորիսի շրջանում կարգը համեմատաբար արագ վերականգնվեց, ապա Սիսիանի շրջանում ապստամբները համառ դիմադրություն ցույց տվեցին: Ապստամբությունը, այնպես չէ, որ արագ դադարեց, նրա ղեկավարներից մի քանիսը դաժան պատիժների ենթարկվեցին, զնդակահարվեց Սիսիանի ապստամբ զինված ջոկատների ընդհանուր հրամանատար Եղո Իսկանդարյանը<sup>14</sup>:

Թեև մայիսյան ապստամբությունը Զանգեզուրում ճնշվել էր, բայց Աղբբեջանի խորհրդայնացումն անշրջելի էր դարձրել բոլշևիզմի արմատավորումը գավառում: Աղբբեջանի խորհրդայնացումը և այնտեղ կարմիր բանակի ներկայությունը մեծապես ոգեշնչել էին Զանգեզուրի, հատկապես Սիսիանի և Գորիսի շրջանների բոլշևիկներին՝ կյանքի կոչելով նորանոր կազմակերպություններ կամ բազմամարդ դարձնելով եղածները:

Մայիս-հունիս ամիսներին Սիսիանի Բռնակոթ, Շաղաթ, Ղարաքիլիսա, Ախլաթյան, Ախքենդ, Անգեղակոթ գյուղերի կոմբջիջներից յուրաքանչյուրում արդեն տասնյակ կուսակցականներ էին հաշվվում<sup>15</sup>:

Մայիսի 24-ին Բռնակոթ գյուղում տեղի ունեցավ Սիսիանի շրջանի մի շարք գյուղերի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որն ընտրել էր շրջանային հեղկոմ՝ Թովմաս Ադոնց, Հակոբ Գևորգյան, Պատվական Տեր-Ղազարյան կազմով<sup>16</sup>: Որոշվեց նաև կազմակերպել կոմունիստական զինված խմբեր, շճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարությունը, նախապատրաստվել զինված պայքարի խորհրդային իշխանության հաստատման համար<sup>17</sup>:

Բռնակոթի խորհրդակցությունից հետո հեղկոմներ կազմակերպվեցին նաև Սիսիանի մի շարք գյուղերում: Օրինակ, Անգեղակոթում ստեղծվեց հեղկոմ՝ Մկրտիչ Մկրտումյանի նախագահությամբ, որը բնակչության շրջանում գաղտնի ու բացահայտ բոլշևիկյան պրոպագանդա էր մղում, նախապատրաստվում էր կազմ ու պատրաստ դիմավորելու կարմիր բանակի մուտքը Սիսիան:

Սիսիանի՝ մեծապես աճած բոլշևիկյան ընդհատակի աշխատանքները ղեկավարում էին Նիկոլայ Արզումանյանը, Միքայել Գրիգորյանը, Մարտիրոս Մկրտչյանը, Հովհաննես Հայրապետյանը և ուրիշներ:

Ամրապնդվում էին Գորիսի բոլշևիկյան կազմակերպությունները: Հունիսի սկզբներին շրջանի Տեղ, Կոռնիձոր, Քարահունջ, Ալղուլիշեն, Քարաշեն, Շինուհայր, Խոտ գյուղերի կոմբջիջներում հաշվվում էին 150-ից ավելի կոմունիստներ, իսկ Խնձորեսկ գյուղի կազմակերպության անդամների թիվն

<sup>14</sup> 22 ՀԹԿԳՊԱ, ֆ. 4033, ց. 4, գ. 396, թ. 38:

<sup>15</sup> Նույն տեղում, գ. 73, թ. 35:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում:

\* \* \*

1920 թ. մայիսյան ապստամբության գնահատման հարյի շուրջ տաս-  
նամակներ շարունակ չեն դադարում վիճաբանությունները: Խորհրդահայ պատ-  
մազրությունը և Խորհրդային Հայաստանի սփյուռքահայ բարեկամները մա-  
յիսյան ապստամբությունը համարել են ժողովրդական և հերոսական: Նրանք,  
մասնավորապես, ոչ առանց հիմքի, պնդում էին, որ եթե ապստամբությունը  
1920 թ. մայիսին հաղթանակ տաներ և Հայաստանում հաստատվեին խոր-  
հրդային կարգեր, ապա նույն թվականի սեպտեմբերին քեմալական թուր-  
քերը չէին համարձակվի հորձակում գործել խորհրդայնացված Հայաստանի  
վրա, և տեղի չէին ունենա տարածքային այն մեծ կորուստները (Ղարս, Սա-  
րիղամիշ, Կաղզվան, Իգդիր և այլն), որ ունեցավ հայ ժողովուրդը 1920 թ.  
թուրք-հայկական պատերազմի հեռանքով: Ի դեպ, այդ տեսակետը հետա-  
գայում, մոհվանից քիչ առաջ, հակված է եղել պաշտպանելու նաև Հայաս-  
տանի Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը:

1920 թ. մայիսյան ապստամբության մասին տրամագծորեն հակառակ  
տեսակետ է զարգացրել դաշնակցական պատմագրությունը, որն այն համա-  
րել է բոլշևիկների կողմից Հայաստանի Հանրապետության թիկունքին հար-  
ված, դավաճանական հարված:

Մայիսյան ապստամբության գնահատման այս ծայրահեղ մոտեցումնե-  
րը հետազոտողներին հնարավորություն չեն տալիս բազմակողմանիորեն և  
խորությամբ քննության առնել երևույթը, բացահայտել դրա դրական ու  
բացասական կողմերը և կատարել անկողմնակալ գիտական հետևություններ:

Վիճահարույց խնդրի քննարկումը ենթադրում է հաշվի առնել այնպիսի  
իրողություններ, ինչպիսիք են՝ 1920 թ. գարնանից Հայաստանի շուրջը ըս-  
տեղծվող աննպաստ քաղաքական մթնոլորտը և երկրի՝ գնալով միջազգային  
մեկուսացումը, քեմալականների և ռուս բոլշևիկների միջև խորացող մերձե-  
ցումը, Ադրբեջանում կատարված խորհրդային հեղաշրջումը և Հայաստանի  
գլխին կախված կարմիր բանակի ներխուժման վտանգը, ժողովրդի տրամա-  
դրությունների փոփոխությունը բոլշևիկյան պրոպագանդայի և ազդեցության  
հետևանքով, աշխատավոր զանգվածների հոգնածությունը երկարատև պա-  
տերազմներից, երկրի տնտեսության քայքայվածությունը և ուրիշ շատ հան-  
գամանքներ:

Ինչ խոսք, այդ ամենը հաշվի առնելով միայն կարելի է կլինի տալ 1920 թ.  
մայիսյան ապստամբության ճշմարիտ, գիտական գնահատականը:

**А. Г. СИМОНЯН—Майское восстание 1920 г. и его отклики в  
Зангезуре.**—В конце апреля 1920 г. в Азербайджане была установлена  
советская власть, что, в свою очередь, ускорило процесс советизации  
Армении. В этом деле важная роль отводилась местным большевикам,  
под руководством которых в мае 1920 г. в республике было поднято  
восстание с целью свержения законной власти, установления в стране  
советского строя. Восстание нашло отклик также в Зангезуре, где  
большевистские организации питали надежду, что со стороны Азер-  
байджана восставшим придут на помощь части 11-ой Красной армии.  
Однако этого не случилось. Восстание было подавлено как в Зангезу-  
ре, так и во всей Армении. Несмотря на это оно имело тяжелые по-  
следствия во внутренней жизни республики, способствовало ослабле-  
нию сопротивляемости страны перед угрозой внешних врагов.

<sup>18</sup> Նույն տեղում, գ. 432, ք. 3, ք. 1022, ց. 2, գ. 180, քք. 6, 7, 8, 14, 15, 16, 18,  
20, 22, 23:  
28